«ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱԼԲԵՐՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Երվանդ Քոչար, բն. 21,18)

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի ապրիլի 22-ի թիվ 56/24 գրության

Հարգելի՛ պարոն Ասատրյան,

«Գնումների մասին» օրենքի 5.1.-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու իրավունք ունեն՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք:

Տվյալ դեպքում՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) կողմից ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՄՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/17» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի մասնակիցներն են «Փըրֆեքթ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ, «Ֆոր Քյ Քնսալթինգ» և «Սաամ-Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունները:

Միևնույն ժամանակ, «Քրոու ընդ Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից չի ներկայացվել որևէ տեղեկատվություն վերջինիս լրատվական գործունեություն իրականացնելու կամ հասարակական կազմակերպություն հանդիսանալու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 5.1.-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝ Ընկերությունը Հանձնաժողովի և «Սաամ-Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2024 թվականի ապրիլի 15-ին կնքված թիվ «ՄՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/17» պայմանագրի (այսուհետ նաև՝ **Պայմանագիր**) շրջանակներում հանրային հսկողություն իրականացնելու իրավունք ունեցող սուբյեկտ չի հանդիսանում և ըստ այդմ՝ Ընկերության մասնակցությունը Պայմանագրի կատարման արդյունքի ընդունման գործընթացին չի հաստատվում:

Հարգանքով՝

Նարա Դավթյան

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի վարչատնտեսական վարչության պետ,

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար